

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Աշխատանքի անվանում

Շարժիչագործ

### Աշխատանքի վայրը, տեսակը, աշխատաժամանակը

ք. Երևան, հիմնական, լրիվ աշխատաժամանակ

### Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

**«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:**

### Աշխատանքի նկարագիր

- Իրականացնել տրանսպորտային միջոցների շարժիչների ախտորոշիչ և կանխարգելիչ զննում, թերությունների հայտնաբերում,
- Իրականացնել սպասարկվող սարքավորումների բնականոն աշխատանքի մեկնարկը, դադարեցումը և մոնիտորինգը,
- Իրականացնել շարժիչի վերանորոգման պարզագույն աշխատանքներ,
- Անմիջական ղեկավարին զեկուցել կատարված աշխատանքի հետ կապված բոլոր հայտնաբերված խախտումների և թերությունների մասին,
- Աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային պաշտպանության կանոնների պահպանում;
- Ընկերության կողմից տրամադրված գործիքների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների և անհատական պաշտպանության միջոցների խնամքով օգտագործում:

### Պահանջներ

- Մեքենայի ներքին կառուցվածքի, դրա շահագործման սկզբունքների մասին գիտելիքներ
- Մեքենայի տեխնիկական բնութագրեր, սարքերի, մեխանիզմների և ագրեգատների նշանակություն և սպասարկման գիտելիքներ
- Անսարքությունների հայտնաբերման և արագ վերացման մեթոդներ
- Թիմում աշխատելու ունակություն
- Կարգապահության և բարձր պատասխանատվության զգացում

### Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները/CV [hr@vjur.am](mailto:hr@vjur.am) էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Շարժիչագործ** կամ զանգահարել **033-144-748** հեռախոսահամարին: Հարցազրույցին մասնակցելու համար կիրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: